ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА
REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT
DEPUTY MINISTER

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: +374 10 59 96 00, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, secretariat@escs.am, www.escs.am

6 մարտի 2023 թ.

ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵՐԱՐ «ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՏԻՍ ԼԵՌԱՆ ՎՐԱ ՆՈՐ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՄՐՈՑԻ ՀԵՏԱԳԱ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ, ԱՄՐԱԿԱՅՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՈՒՐՋ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարությունը (ի դեմս նախարարի տեղակալ՝ Ալֆրեդ Քոչարյանի) և բարերար **«Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամը (ի դեմս լիազոր ներկայացուցիչ՝ Արայիկ Կեսոյանի) (այսուհետ կողմեր),**

կարևորելով պատմամշակութային ժառանգության արժեքն ու հետագա սերունդներին փոխանցելու անհրաժեշտությունը,

շահագրգռված լինելով օժանդակելու պատմության և մշակույթի հուշարձանների վերականգնմանն ու օգտագործմանը,

անհրաժեշտ համարեցին միավորել կողմերի հնարավորությունները և համատեղ աշխատանքներ իրականացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հատիս լեռան վրա նոր հայտնաբերված ամրոցի հետագա հնագիտական ուսումնասիրության, ամրակայման և վերականգնման աշխատանքների շուրջ:

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հատիս լեռան վրա նոր հայտնաբերված ամրոցի հետագա հնագիտական ուսումնասիրության և վերականգնման ուղղությամբ կողմերը պայմանավորվեցին հետևյալի մասին.

1. **Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝**

   1) աշխատանքների ընթացքում և ավարտից հետո կապահովի նոր հայտնաբերված ամրոցի պատշաճ պահպանությունը,

   2) աշխատանքների կատարման ընթացքում կցուցաբերի մասնագիտական և գիտագործնական աջակցություն:

2. **Բարերար «Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամը՝**

   1) սեփական միջոցների հաշվին կիրականացնի նոր հայտնաբերված ամրոցի հնագիտական պեղումների, ինչպես նաև ամրակայման և վերականգնման աշխատանքները,

   2) իր իրավասությունների սահմաններում կցուցաբերի աջակցություն այլ հարցերում:

3" Հուշագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ: Հուշագիրը կարող է լուծվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ հուշագրի պայմանները խախտելու դեպքում:

4. Կողմերը պարտավորվում են լրատվական միջոցներով լուսաբանել և ապահովել իրականացվող աշխատանքների հրապարակայնությունը:

5. Սույն հուշագիրը բաղկացած է 3 (երեք) էջից և կնքվում է հայերեն՝ 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին հատկացվում է սույն հուշագրի 1 (մեկ) օրինակը:

6. Սույն հուշագրում լրացումներ և փոփոխություններ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ՝ գրավոր:

7. Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն՝

նախարարի տեղակալ՝

ԱԼՖՐԵԴ ՔՈՉԱՐՅԱՆ

ստորագրություն

Բարերար՝

«Գագիկ Ծառուկյան» բարեգործական
հիմնադրամի լիազոր ներկայացուցիչ

ԱՐԱՅԻԿ ԿԵՍՈՅԱՆ

ստորագրություն